№ 260 ԿԻՐԱԿԻ, 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 260

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պետք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նորին Սրբութիւն Ծայրագոյն Պատրիարքի,
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Բարձրագոյն հովանաւորութեան տակ գտնվող պատերազմից վնասվածներին օգնող
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԸ
սկսելով նուիրաբերութիւնների ընդունելութիւնը, խոնարհաբար խնդրում է բոլոր սրտացաւ անձնաւորութիւններին իրանց առատ նուէրներով ջերմ արձագանք տալ Կոմիտետի կոչին:

Օտար քաղաքները թող բարեհաճեն իրանց նուէրները ուղարկել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Тифлисскій Коммерческій Банкъ, կամ Гановская ул. д. № 23, казначею Гавріилу Моисеевичу Цуринову. իսկ Թիֆլիսցիները կարող են ուղարկել իրանց նուիրաբերութիւնները Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Գրասենեակը՝ Абасъ-Абадская пл. д. № 7.
(օ.մ.) տռ. 1001. 5—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 17-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ
M-lle Ֆիֆի
Դրամա 1 արար., Մետենիէի, Թարգմ. Ս. Շխեանցի
✦ ՎԵՐՋԸ ✦
ՑՆՈՐՔՆԵՐ
Կոմեդիա 3 արար., Ռոստանի, Թարգմ. Ա. Եզեկեանի
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Ժասմէն, Լիւսի, Մայսուրեան, Մանուչարեան, Մարի, Ցասմիկ, Սեւումեան, պ. պ. ԱԲԵԼԵԱՆ, Ալիխանեան Ի., Արաքսեան, Աւետեան, Բերոյեան, Խորէն, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մուրադեան, Տէր-Առաքելեան, Սեւումեան և ուրիշ.:
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին:
Ռէժիսեօր՝ Ե. ԶՄՇԿԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Ծաւրինեան, Ա. Ղազարեան
տռ. 998. 2—2

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշեր
Ս. Պ. Տահպարոնեանց
(ք. կ.) տռ 970. 100—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի:
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6: Սոլոլակ, Ռտիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(չ. ու. կ.) տռ. 875. 50—28

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան):
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. $12^{1}/_{2}$—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սոլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) տռ. 784. 100—35

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 նոյեմբերի

ՍՈՖԻԱ.— Կ. Պոլսից տեղեկացնում են. «Պաշտօնապէս ճշտվում է, որ օսմանեան փոխառութիւնների կուպոնների վճարումը այսուհետև կատարվելու է միմիայն Կ. Պոլսում»:

ՀՌՈՄ.—Տեղս եկան Բէյրութի ռուսաց գեներալ-հիւպատոսի և փոխ-հիւպատոսի կանայք: Նրանք հաղորդում են, որ Թիւրքաց ոստիկանութիւնը կալանաւորել է նրանց ամուսիններին, չը նայած Բէյրութից վալիի ստացած վկայականներին: Ձերբակալութիւնը կատարվել է գերմանական հիւպատոս ֆոն-Մուտիուսի կարգադրութեամբ: Ձերբակալվածներին տարել են Դամասկոս՝ Թիւրքաց զօրքի գլխաւոր բանակը: Միաժամանակ ձերբակալված են 50 ռուսներ:

—

(Լրագիրներից)

✦ Թիւրքաց մի հակահականաւ Բոսֆորում կպել է ականի և ջրասուզվել:

✦ Եգիպտոսի դէմ ուղարկված Թիւրք զօրքերը առաջ են շարժվում Միջերկրական ծովի ափով, որով արշաւանք կատարեց Մեծն Նապոլէոն: Անգլիացիք միանգամայն պատրաստ են Թիւրքերին դիմադրելու համար:

✦ Իգդիրից «Б. Сл.»-ին հեռագրում են, որ համիդիէ գնդերը, ռուս զօրքերի առաջ նահանջելու ժամանակ, ճանապարհին կողոպտել են հայկական գիւղերը: Ամադ և Իրէն գիւղերում նրանք կոտորել են բնակիչներին: Գնդերի հրամանատար Աբդիւլը սւինի ծայրին է ցցել իր մորթած քահանայ տէր-Յովսէփի գլուխը և այդ կերպ անցել է փողոցներով ու շուկայով:

✦ Թիւրք-ռուսական ռազմաբեմում մօտ երկու արշին ձիւն է նստել: Սոսկալի սառնամանիք է, որ դժուարացնում է ռազմի գործողութիւնները:

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

—

Ձմեռային արշաւանք

Բասէնի հովտում՝ Կարաուրգանից մինչև Դէվէ-Բոյնու, ուր գործում է մեր քաջարի զօրքը, այժմ ձմեռը արդէն մտել է իր իրաւանց սահմանների մէջ. ձիւնը, բուքը և սառնամանիքը, որ երբեմն հասնում են 20—23 աստիճանի, այդ բարձրադիր շրջանի բնորոշ գծերն են՝ սկսած հոկտեմբերի սկզբից մինչև մարտի վերջը: Հաղորդակցութեան առանց այն էլ վատ ճանապարհները, ծածկվելով երկու արշինաչափ հաստութիւն ունեցող ձեան հաստ շերտով, վերին ծայր դժուարացնում են ոչ միայն զօրքերի շարժումը, այլ, որ գլխաւորն է, պատերազմական պաշարի սայլերով և նոյն իսկ բեռնաւոր գրաստներով փոխադրութիւնը:

Այդպիսի պայմաններում զօրքի առաջխաղացութիւնը դառնում է բառիս ամենալայն մտքով հերոսական, իսկ պատերազմական գործողութիւնները սովորաբար կանգ են առնում և ընդունում կամ պաշտպանողական բնոյթ կամ կավալերիական մանր հետախուզումների կերպարանք, որի ընթացքում կռւող կողմերը միմիայն ժամանակ են շահում կարգի բերելու զօրքի սանիտարական դրութիւնը, վիրաւորների ու հիւանդների փոխադրութիւնը և մանաւանդ զօրքի մատակարարողական մասը:

Ամենից դժուարինը ձմերային լեռնային պատերազմների ժամանակ այս վերջին հանգամանքն է:

Մեծ դժուարութիւն է ներկայացնում այդ շրջանում մանաւանդ հեծելազօրային մասի մատակարարութիւնը՝ խոտի ու գարմանի, որոնք, բռնելով մեծ ծաւալ, նոյն իսկ մամլած դրութեամբ պահանջում են փոխադրական առատ միջոցներ:

Բացի այդ, առաջ է գալիս զօրքին տաք հագուստներ մատակարարելու կարևոր գործը՝ մուշտակների, կիսամուշտակների, տաք բրդէ գուլպաների, ձեռնոցների և վերնազգեստի հոգսը, որոնց բացակայութիւնը մեծապէս զգացվեց 1878 թւականին, երբ մեր զօրքերը ստիպված եղան ձմեռելու Դէվէ-Բոյնու դիրքերում, Հասան-Կալէի ձմեռանոցներում, կրելով անտանելի տանջանքներ և տալով մեծամեծ զոհեր: Սալ-Ման

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵԳԻՊՏՈՍ

—

Աղեքսանդրիա, 25 հոկտ./7 նոյեմ.

Վերջին թղթակցութենէս յետոյ այստեղ յոյժ կարևոր դէպքեր պատահեցան:

Եգիպտական ոստիկանութեան ծառայութեան մէջ գտնուող Մորս անունով գերմանացի ոստիկան մը ձերբակալուեցաւ, երբ Պօլսէն Եգիպտոս կը վերադառնար խդիւական «Սայիդիէ» շոգենաւով:

Ցիշեալ ոստիկանին մօտ գտնուեցան պայթուցիկ նիւթեր և յոյժ վտանգաւոր թուղթեր:

Անգլիական զինուորական ատեանին կողմէն կատարուած հարցաքննութեամբ հաստատուեցաւ, որ յիշեալ Մօրսը ահագին դաւադրութեան մը կարևոր գործիչներէն մին էր, նպատակ ունենալով ներքին ապստամբութիւն յառաջ բերել:

Գիտնալով որ մահուան պիտի դատապարտուի, խնդրեց իր դատաւորներէն, որ խնայեն իր կեանքին և այս պայմանաւ բոլոր իր մեղսակիցներուն անունները հաղորդէ:

Այս մասին խոստում առնելէ յետոյ, Մօրս զգայացունց յայտնութիւններ ըրաւ, որոնցմէ կ'երևայ որ խդիւական գերդաստանի անդամներէն ոմանք, ինչպէս նաև անոր հետևորդներէն շատեր, յիշեալ դաւադրութեան մասնակից են:

Խդիվին եղբայրը՝ իշխան Մահմուդ փաշա և հօրեղբայրը՝ իշխան Հասան Ազիզ փաշա այս շաբթու Իտալիա աքսորուեցան:

Կահիրէի մէջ ձերբակալուեցան մեծ թուով երիտասարդ-Թիւրքեր, բոլորն ալ բարձրաստիճան զինուորականներ, որոնք վերոյիշեալ դաւադրութեան մասնակից էին:

Հաւանօրէն քիչ ատենէն պաշտօնանկ կը լինի Եգիպտոսի խդիվը, որուն անհաւատարմութիւնը այլևս ամեն կասկածէ զերծ է:

Իր ամենէն հաւանական յաջորդը կը նկատուի իշխան Հիւսէյին փաշա:

Սուէզի ջրանցքին յանկոյս, Էլ-Արիշի անապատը, որ եգիպտական հող է, յարձակում կրեց վրանաբնակ Թիւրք-արաբացիներէ, որոնց դէմ շաբաթէ մը ի վեր կը կռուի անգլիական զօրքը: Այս վրանաբնակները Թիւրք բանակին յառաջապահ զօրքը կը կազմեն, որոնց նպատակն է Սուէզի ջրանցքը անցնիլ և ուղղակի Կահիրէի վրայ քալել:

Կարելի չէ այսքան յիմարութիւն երևակայել:

Այս դէպքերուն հետևանօք պաշարման վիճակ հրատարակուեցաւ ընդհանուր Եգիպտոսի մէջ:

Եգիպտոսի ամեն կողմը անդորրութիւնը այնքան կատարեալ է որ՝ շատեր չէին իսկ գիտեր Էլ-Արիշի ընդհարումները: Բայց անգլիական բանակին հրամանատար զօրավար Մաքսուէլը այսօր պաշտօնական յայտարարութեամբ այդ լուրը ժողովուրդին հաղորդեց: Ուշագրաւ են յիշեալ յայտարարութեան հետևեալ տողերը.

«Սուլթանը,—կըսէ այդ յայտարարութիւնը,—մահմեդականաց կրօնական պետը ըլլալով՝ ժողովուրդին կրօնական զգացումները չվիրաւորելու համար, անգլիական կառավարութիւնը առանձինն կը ստանձնէ երկրին պաշտպանութիւնը Թիւրքական յարձակմանց դէմ և ժողովուրդին աջակցութիւնը չի խնդրեր, բայց միևնոյն ատեն կը սպասէ և կը պահանջէ, որ ամեն մարդ իր տեղը հանդարտ նստի և Անգլիոյ թշնամիներուն չօգնէ»:

⁂

Դաւաճան Մօրսի վճիռը երէկ հրապարակաւ կարդացուեցաւ: Ցիշեալը ցկեանս տարապարհակ աշխատութեան դատապարտուած է: Թղթակից

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Երևկոյեան հաղորդագրութիւն)
15 նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Նոյեմբերի 14-ին մեր զօրքերի ճակատում նշանաւոր ռազմական ընդհարումներ չեն եղել:

Վերջին տեղեկութիւնների համաձայն, վերջին կռիւների ժամանակ ջարդված Թիւրքական զօրքերը ունեցել են մեծ կորուստ. այսպէս՝ 28-րդ և 29-րդ դիվիզիայի բոլոր գնդերը կորցրել են իրանց կազմի համարեա թէ կէս մասը: Բոլորովին ոչնչացված է 88-րդ գնդի երկու բատալիոն: Խիստ կերպով տուժել են 102-րդ գունդը, նոյնպէս և 23-րդ և 24-րդ հեծեալ գնդերը: Կորուստը խոշոր է նաև 34-րդ դիվիզիայի գնդերում:

Մալազգերտի մօտ, ինչպէս երևում է, սպանվել է 34-րդ դիվիզիայի հրամանատարը, իսկ 33-րդ դիվիզիայի հրամանատարը փախել է, որի փոխարէն նշանակվել է մի ուրիշ անձն:

Թիւրքական զօրաբանակի հրամանատարը անբաւական լինելով քիւրդերի գործողութիւններից՝ վճռել է նրանց վերակազմութեան ենթարկել:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

III

Ահա ինչ որ ըրին ցարդ արտասահմանի հայ գաղութները, գէթ անոնք, որոնց գործունէութեան մասին տեղեկութիւն ունիմ: «Ցարդ» կըսեմ, որովհետև համոզուած եմ, որ հայութեան ոչ մէկ հատուածը՝ պատերազմին առաջին օրերուն մէջ երբեք դաշնակցութեան հանդէպ իր համակրութիւնը այս կամ այն ձևով յայտնելով իր պարտքը լիովին կատարած պիտի չհամարի: Ես աներկբայ եմ, որ պատերազմին ամբողջ տևողութեան միջոցին հայ ազգը պիտի շարունակէ նորանոր ձևերով իր այդ համակրութիւնն ու աջակցութիւնն ապացուցանել, ինքն ալ իր կրցած չափովը և եղանակովը՝ պիտի մասնակցի ազատականութեան յաղթանակին համար մղուած այս վսեմ պայքարին՝ անոր ամբողջ տևողութեանը միջոցին: Ուզեցի արտասահմանի գաղութներուն մինչև հիմա ըրած ջանքերուն վրայ այս քանի մը տեղեկութիւնները տալ, մտածելով որ անոնք կրնան անծանօթ մնացած ըլլալ ռուսահայ հասարակութեան և թէ շահեկան է մեր ռուսահայ եղբայրներուն համար գիտնալ դիրքը զոր բռնած է և դերը զոր կատարած է արտասահմանի հայութիւնն այս բոպէիս:

Թէ ինչ պիտի որոշեն Կովկասի հայերը իրենց մեծ համագումարին մէջ, չեմ գիտեր: Մտքէս չեմ անցներ ծրագիրներ ներկայացնել իրենց, վստահ ըլլալով որ իրենք շատ լաւ գիտեն ինչ որ կրնան ու պարտին ընել ու պէտք չունին հեռուէն եկած ոևէ խորհուրդի: Հաւանական է արդէն, որ իրենք ալ Ռուսիոյ և իր դաշնակիցներուն իրենց համակրութիւնը յայտնելու համար պիտի որդեգրեն այն քանի մը գլխաւոր միջոցները, զոր Եւրոպայի հայ գաղութները՝ ինչպէս և բոլոր ազատասէր օտար ազգերը՝ ձեռք առին,—հիւանդանոց հիմնել կամ Կարմիր Խաչի համար բացուած հանգանակութեան մասնակցիլ, զինուորներու ընտանիքներուն օգնութիւն հասցնող գործին աջակցիլ, կամաւորներ տալ. և իրենք այս ամենը պիտի ընեն աւելի լայն, հզօր, հանդիսաւոր և ուշագրաւ կերպով, քան հայութեան ուրիշ ոևէ մէկ հատուածը, որովհետև իրենք մեր ազգին ամենէն հօծ, ուժեղ, կազմակերպուած ու գիտակից մասն են:

Միայն, առանց խորհուրդ տալու ձևն ունենալու, մէկ քանի նկատողութիւն կուզեմ ընել, մեր ռուսահայ եղբայրներուն գործունէութիւնը աւելի եւս ազդեցիկ և արդիւնաւոր տեսնելու փափաքէս մղուած:

Արշակ Չօպանեան

Մարսէյլ, 15 հոկտ.

Կ. ՊՈԼՍՈՒՄ

—

Բուխարէստից հաղորդում են «Рѣчь»-ին Կ. Պոլսում քրիստոնեաների դէմ տեղի ունեցած վերջին ցոյցի մանրամասնութիւնների մասին: Ցիշեալ թերթի ասելով այդ ցոյցում մասնակցել են գլխաւորապէս շրջմոլիկներ, Թափառականներ և հոջաներ: Այդ օրվայ գիշերը Կ. Պոլսում տեղի են ունեցել լուրջ անկարգութիւններ, որոնց ղեկավարներն են եղել Թիւրք պաշտօնեաներ: Ամբոխը ուղղվել է քրիստոնէական թաղը: Ռուսահպատակ հայ Թօքաթլեանի հիւրանոցը բոլորովին քարուքանդ է արված: Քարուքանդ են արված մի շարք կաֆէներ և ռեստորաններ, որոնք պատկանում էին ֆրանսիացիներին, յոյներին և հայերին: Կ. Պոլսի եւրոպական թաղում՝ Պերայում բնակվող քրիստոնեաներից նրանք, որոնք չէզոք պետութեանց հպատակներ են, փակվել են իրանց տներում և այդ գիշերը անց կացրել խիստ անհանգստութեան մէջ:

Ֆրանսիական և ռուսական դեսպանատների մօտ եղել են թշնամական ցոյցեր: Դեսպանատները հիմնովին քայքայելուց ետ է պահել Թիւրք ամբոխի առաջնորդներից մէկը, որ յայտնել է, թէ իշխանութիւնից հրաման չը կայ վերջնականապէս քանդել:

— Երբ հասնի հարկաւոր ժամանակը,—ասել է առաջնորդը,—այն ժամանակ ամեն բան կը վճռվի:

Եւ ամբոխը ցրվել է: Քրիստոնեաների տրամադրութիւնը խիստ տխուր է:

*

«Рѣчь»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, դրամական խիստ պակասութեան պատճառով, օսմանեան կառավարութիւնը դիմել է տուրքի մի առանձին միջոցի: Առանձին փողոցների և թաղերի վրա տուրք է դրված 50—100,000 ֆրանկ, որ յետոյ պէտք է բաժանվի այդ փողոցների և թաղերի տնատէրերի և բնակիչների միջև: Թիւրքիայում յարքունիս են գրաւվում գրեթէ ամեն ինչ, անգամ կարասիք, շորեղէն և սպիտակեղէն: Բէյրութի մի խանութից վերցված են 400 շիշ օծանելիք:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
15 նոյեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Վիսլայի ձախ ափին մեր զօրքերը, յարձակման դիմելով Բզուրի գետի ստորին հոսանքի կողմից, հասան Գոմբինին: Ճակատամարտի կենտրոնում Բրէզինի քաղաքը և Մօրգի գետակի հովտի գիւղերը մենք վերցրել ենք, մի քանի տեղում ետ մղելով գերմանացիներին սուիններով: Մեր առաջխաղացումը այդ ռազմավայրում շարունակվում է: Բրէզինի և Գլօվնոյի միջև մեր հեծելագունդը մի քանի աջող յարձակումներ գործեց թշնամու հետևոտն գնդերի վրա: Գերմանացիների հեռանալուց յետոյ, մենք ձեռք ձգեցինք թնդանօթներ. մեր վերցրած գերիների թիւը դեռ չենք պարզել: Բժգովի և Տուշինի մօտից հեռացող գերման զօրքերի թւումն է եղել 3-րդ պալատական գունդը: Զգերժ-Ստրիկով ռազմավայրում մենք յարձակվեցինք թշնամու վրա Լօձիի կողմից: Զգերժի և Զդունի միջև գերման զօրքերը մնում են իրանց խրամատներում: Ընդհանուր առմամբ Վիսլայի և Վարտայի միջև ճակատամարտը զարգանում է մեզ համար բարենպաստ:

Չէնստոխով-Կրակով-Տիմբարկ զօրաճակատում մեր աջողութիւնը պարզւում է աւելի որոշակի։ Մեր զօրքերը նոյեմբերի 13-ին գերեցին աւելի քան 4000 հոգու։ Առանձնապէս մենք աջողութեամբ յարձակում գործեցինք թշնամու վրա Շրինէավի ստորին հոսանքի շրջանում, ուր մեր զօրքերին անձնատուր եղաւ Գօնվէդեան գնդի 31-րդ գումարտակը, նաև մենք վերցրինք աւստրիական ուժեղ դիրք Րաբի ձախ ափում։ Մասնաւորապէս յամառ դիմադրութիւն ցոյց տուին աւստրիացիք Բօխնիում, որը մենք վերցրինք սուինային կռւով։ Այս կռւում մենք գերեցինք աւելի քան 2000 հոգու, գնդակացիրներ ու 10 թնդանօթ։ Վիսլայի աջ ափում հակառակորդը ետ է քաշվում դէպի Կրակովի շրջանը մեծ անկարգութեամբ, եռանդով հալածվելով մեր զօրքերից։

Մեր զօրքերի ոգին, որոնք աննկուն կերպով մասնակցում են համարեա 45 օր տևող կռիւներում, զօրապետների հաղորդագրութիւնների համաձայն, գերազանց է։

Ստացվել են միանգամայն վստահելի տեղեկութիւններ այն մասին, որ Կրակովի տաճարի զանգակատանը դրված են անթել հեռագրագործիք և գնդակացիրներ՝ մեր աէրօպլանների դէմ կրակ բանալու համար։

ԳՈՐԾՈՂ ԲԱՆԱԿ.—«Арм. Вѣстникъ»-ում նոյեմբերի 13-ին տպված է.

«Ռուս-պրուսական զօրաճակատում, հիւսիսային մասում, նոյեմբերի 10—12 գերման զօրքերի Վէրժբօլօվոյի զօրամասը շարունակեց դանդաղօրէն նահանջել մեր զօրքերի ճնշման տակ, յամառութեամբ պաշտպանվելով իրանց գրաւած ամրութիւններում ու դիրքերում՝ Մազուրեան լճերի ռազմագծի ուղղութեամբ։

«Տօրն-Բեալա զօրաճակատում նոյեմբերի 10—12 տեղի էր ունենում ճակատամարտ մեր և գերման զօրքերի միջև։

«Տօրն-Կրակով զօրաճակատում նոյեմբերի 10—12 Լօձի ճակատամարտը իր գագաթնակէտին հասաւ։ Կռիւը տեղի է ունենում ամբողջ ռազմագծի ուղղութեամբ։ Գերմանացիների խիտ զօրամասերը, որոնք ճեղքել էին մեր զօրքերի ռազմագիծը Ստրիկովի շրջանում և Լօձ-Բրէզին-Կօլիւշկ-Տուշին-Րժգովից 15 վերստ դէպի հիւսիս-արևելք ու Լօձից դէպի հարաւ-արևելք, այժմ ետ են քաշվում մեր զօրքերի ճնշումից ամեն կողմից, լարելով իրանց ուժերը, որպէսզի մեր զօրքերի միջով մի կերպ հասնեն դէպի հիւսիս։ Լօվիչի շրջակայքում գործող մեր զօրքերը նոյեմբ. 11-ին լուրջ ջարդ տուին գերման զօրքերին, և սրանք այժմ փութանակի նահանջում են հիւսիս-արևմտեան ուղղութեամբ։ Վէլիւնի կողմից եկած գերման ուժերը, արշաւելով դէպի արևելք, նոյեմբերի 10-ին ջարդվեցին և ցիրւցան եղան։

«Աւստրօ-գերմանական զօրքը, գրոհ տալով մեր զօրքերի վրա, յարձակման դիմեց շատ կէտերում։ Շատ կտրուկ յարձակումներ նոյեմբերի 10—12 գործեցին աւստրօ-գերմանական զօրքերը Չէնստոխով-Կրակով ռազմագծում։ Թշնամին յարձակումներ էր գործում մէկը միւսի ետևից. ամեն ջանք նրանք գործադրում էին, որպէսզի ետ մղեն մեր զօրքերին իրանց դիրքերից, սակայն մեր զօրքերը խիզախօրէն դիմադրեցին գերմանական ուրագանին և իրանց յարձակման դիմելով՝ նոյեմբերի 12-ին այդ զօրաճակատում ձեռք բերին ակնյայտ գերակշռութիւն աւստրօ-գերմանական զօրքերի դիմաց։ Նոյեմբերի 9-ին տեղի ունեցած կռիւներում մեր զօրքերը ձեռք ձգեցին աւելի քան 5350 գերու, 6 գնդակացիր։ Մի քանի կէտերում թշնամին ուղղակի փախուստի դիմեց, թողնելով իր վիրաւորներին ու զէնքերը։

«Գալիցիական զօրաճակատում նոյեմբերի 10—12 մեր զօրքերը շարունակեցին ետ մղել աւստրիացիներին դէպի Կրակով և Կարպատների այն կողմը։ Չը նայած ձմրան և այն հանգամանքին, որ Կարպատեան լեռները համատարած ծածկված են խոր ձիւնով, մեր զօրքերը, առաջանալով լեռնաշղթայով, ցիրուցան են անում աւստրիացիներին դէպի Ունգարական հովիտը։

«Ստրի-Չէրնովիցա զօրաճակատում նոյեմբերի 10—12 մեր զօրքերը շարունակեցին ետ մղել աւստրիացիներին և գրաւեցին լեռնանցքներ Կարպատներում»։

Մեր զինւորական մինիստրութիւնը չափազանց անհանգիստ է այն հանգամանքից, որ Կրակովում աւստրիացիք թնդանօթներ ու գնդակացիրներ են դրել քաղաքի հին աղօթատների աշտարակների վրա՝ մեր աէրօպլաններին ռմբակոծելու համար։ Հաւանօրէն, գերման ղեկավար շրջանները, օգտվելով պատմական յիշատակարաններից այլ նկատումով, այդպիսով կամենում են ստիպել մեզ՝ ռմբակոծել լեհական այդ քաղաքը, որի ամրութիւնները հանդիսանում են Հաբսբուրգների վերջին նեցուկը։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 նոյեմբերի

ՊԱՐԻԶ.—Նոյեմբերի 12-ից հաղորդվում է, որ ամբողջ օրը ոչինչ աչքի ընկնող բան չը պատահեց։ Հիւսիսում թնդանօթաձգութիւնը թուլացել է։ Թշնամին յարձակումների չը ձեռնարկեց մեր ռազմագծերի դէմ, որոնք մի քանի կէտում թեթև կերպով առաջ են անցել։ Արրասի ռազմավայրերում քաղաքի և արուարձանների ռմբակոծութիւնը շարունակվեց։ Էն գետի վրա թշնամին փորձեց յարձակվել Միսսի գիւղի դէմ, բայց լիակատար անաջողութեան հանդիպեց, կրելով լուրջ վնաս։ Մենք մասնակի աջողութիւն ունեցանք Սուէնից դէպի արևմուտք ընկած ռազմավայրում։ Արգօննեում, Վէվրում, Լօթարինգիայում և Վօգէզներում տիրում է համարեա լիակատար հանգստութիւն։

Ամբողջ զօրաճակատում եկել է առատ ձիւն, մանաւանդ Վօգէզների բարձր մասերում։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ Բէլգիայում լիակատար հանգստութիւն է։ Կենտրօնում տեղի է ունենում թնդանօթային կռիւ, որի ժամանակ հետիոտն գնդերը չեն դիմում յարձակումների։ Նոր բան չը կայ։ Փոքր ճակատամարտ է Վէրդէօնից դէպի արևելք։

ԼՕՆԴՕՆ.—«Դէյլի-Մէյլի» արտակարգ յաւելուածը հաղորդում է, որ դաշնակիցները ետ են վերցրել Դիկսմիւդէն։

«Դէյլի Նիւսի» թղթակիցը հեռագրում է, որ դաշնակիցների նաւատորմը ռմբակոծեց Զէեբրիւգէն և մեծ աւերածութիւններ գործեց նրա մէջ։ Ստորջրեայ նաւի կառուցման վրա հսկող 17 գերման ինժեներներ սպանվել են։

«Թայմսի» թղթակիցը հեռագրում է, որ գերմանացիների նահանջը Նիւպօր-Դիկսմիւդէ ռազմագծի մօտից ունի աւելի ընդհանուր բնոյթ, քան սկզբում ենթադրվում էր։ Օդագնացների կատարած հետախուզումները ապացուցանում են, որ թշնամին Իզէրում թողել է միայն այնքան զինւոր, որոնք կարող են դիմադրել դաշնակիցներին՝ յարձակման դէպքում։ Այդ շրջանում գերմանացիների կողմից լուրջ յարձակում սպասել չի կարելի։ Այդ ռազմագծից կանչված զօրքերն ուղարկվել են Լիլլ ռազմավայրը։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 նոյեմբերի

ՆԻՇ.—Նոյեմբերի 11-ին շարունակվեցին կռիւները Լազարեվաց-Միոնիցա զօրաճակատում, որոնք առանձնապէս կատաղի էին այդ զօրաճակատի ձախ զօրաթևում։ Լազարեվացից դէպի հարաւ-արևելք գտնվող դիրքերում մինչև այժմ այդ կռիւները վերջնական հետևանքի չը յանգեցին։ Միևնոյն օրը աջող կռիւ եղաւ Բօգաչիցի մօտ։ Դրինայի աջ ափում ոչինչ էական բան տեղի չունեցաւ։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Շիրնէսում պայթումից խորտակվեց «Բուլվորկ» զրահանաւը. 700-ից աւելի նաւաստիներից կենդանի մնացին 12 հոգի։ Զրահանաւի պայթումը այն աստիճանի ուժեղ էր, որ Շիրնէսի շէնքերը հիմնայատակ են եղել։ Մխի խիտ ամպերը ծածկեցին երկինքը։ Զրահանաւը ընկղմվեց երեք րոպէում։

Չէրչիլը, յայտնելով լորդերի պալատում «Բուլվորկի» կորստեան մասին, ասաց, որ մասնագէտների համոզմունքով՝ պայթումը տեղի պէտք է ունեցած լինի նաւի ներսում, որովհետև ականին դիպչելու ժամանակ նաւի շուրջ ջուրը սիւնաձև վեր է թռչում։ Զրահանաւի կորուստը լուրջ մինուս չի մտցնի ընդհանուր դրութեան մէջ։ Ցամենայն դէպս Չէրչիլը չափազանց վշտացած է մեծ թւով մարդկային զոհերից։

ԲԵՐԳԵՆ.—Նաւային միջնորդների տեղեկութիւնների համաձայն, գերմանական մի ստորջրեայ նաւ ջրասուզել է անգլիական մի ռազմանաւի, որ դիմում էր Հավր՝ նորվէգական ապրանքով, նաև մի շոգենաւի, որ գնալիս է եղել Օլէզունից։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Բէլգիական դրօշակների վաճառման օրը ունեցաւ աչքի ընկնող աջողութիւն։ Դրամը կը յանձնվի բէլգիական կառավարութեանը բէլգիացի որբերին օգնելու ֆօնդի համար։

Լորդ Կիտչէները, խօսելով լորդերի պալատում ռուսական յաղթութեան մասին, ասաց. «Գերմանացիք կրեցին աւելի խոշոր կորուստներ, քան երբէք»։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Տակէօնէսկուն «Ռումանի» լրագրում առաջնորդող յօդուածի մէջ գրում է. «Թիւրքական, աւելի ճիշդ երիտասարդ-թիւրքական մամուլը դժգոհութիւն է յայտնում բօլգար օպպօզիցիայի գործելակերպի առիթով. Գէննադիէվը խոշոր սխալ գործեց, մեղադրելով Ռուսաստանին այն դժբաղդութիւնների մէջ, որոնք վիճակվեցին Բօլգարիային։ Մենք կարող ենք հաստատ ասել, որ Ռուսաստանը երկրորդ բալկանեան պատերազմի սկզբում իր միջնորդութեան նախօրեակին վերին աստիճանի բարեացակամօրէն էր տրամադրված դէպի Բօլգարիան։ Սակայն Աւստրիան Բօլգարիային մղեց դէպի պատերազմ։ Երիտասարդ-թիւրքերն այժմ կամենում են, որպէսզի Բօլգարիան հանդէս գայ իրանց հետ միասին։ Օգտվելով բալկանեան երկրորդ պատերազմից, երիտասարդ-թիւրքերը յարձակվեցին Բօլգարիայի վրա և խլեցին Ադրիանուպօլիսն ու Դիմօտեկան։ Այստեղից անկասկած է, որ նրանք իրաւունք չունեն բարեկամութիւն պահպանելու այդ երկրի հետ։ Բօլգարիայի և Թիւրքիայի լիգան անկարելի բան է»։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բարձրագոյն հրամանով Պետրօգրադում կազմակերպվելու է ներկայ պատերազմում ձեռք ձգված պատերազմական աւարի ցուցահանդէս։ Վերջում ցուցահանդէսը կը փոխադրվի Մօսկվա։

Պաշտօնական։ Պետրօգրադի մօտ զանազան տեղերից խորհրդակցութեան գումարված անձերի նախնական քննութեան ժամանակ, որոնց թւում կային Պետական Դումայի սօց.-դեմօկրատական ֆրակցիայի մեծամասնութեան մի քանի անդամներ, պարզվեց, որ խորհրդակցութիւնը նուիրված էր, պատերազմի առիթով կայացված բանաձևի նախագծի քննութեան, որպիսի բանաձևի մէջ ընդունվում է «փօքրագոյն չարիք Կայսերական միապետութեան և նրա զօրքերի պարտութիւնը» և առաջ է մղվում այն լօզունգը թէ՝ «պէտք է բազմակողմանի կերպով տարածել զօրքերի մէջ և ռազմաճակատում սօցիալիստական յեղափոխութեան պրօպագանդան, որպիսի նպատակով պէտք է անլէգալ մարմիններ հաստատել զօրքերի մէջ»։ Բոլոր ձերբակալված անձինք առնված են հսկողութեան տակ դատական քննիչի որոշմամբ։

ՎԱՐՇԱՎԱ.—Լօձի բերդապետը կարգադրել է, որպէսզի խանութները բաց լինեն ամբողջ օրով։ Լօձ են տարված գերմանացիներից խլված աւտօմօբիլները բէնզինով։

Հաստատվեց լեհական ազգային կօմիտէտ, որ նպատակ ունի աջակցել՝ բոլոր լեհերին միացնելով, անկախ հայեացքներից ու համոզմունքներից՝ Գերագոյն Զօրահրամանատարի կոչում յիշված նախագծերի իրականացմանը։ Կօմիտէտը կոչ է հրատարակել լեհերի անունով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ռուսաց արդարադատութեան մինիստր Շչէգլովիտովը կարգադրել է դադարեցնել նոր բանտերի կառուցումը, ի նկատի ունենալով յանցագործութիւնների պակասելը արքունի գինու խանութները փակելուց յետոյ։

◆ Սերբիային սպառնում է լուրջ վտանգ Աւստրիայի և Բօլգարիայի կողմից։ Սերբիայի մայրաքաղաքը փոխադրվում է Իշտիբ։ Աւստրիան մտորում է Սերբիային տիրելուց յետոյ արշաւել դէպի Սալոնիկ։

◆ Րէյմսի մօտ ահեղ ճակատամարտ է։ Գերմանական ռմբակոծութիւնը չէ դադարում գիշեր-ցերեկ։

◆ Աւստրիական մայրաքաղաքը փոխադրվում է Պրագա։

◆ Արևելեան Պրուսիան դատարկվում է բնակիչներից ռուս զօրքերի առաջխաղացումից։

◆ Գերմանական նաւատորմը պատրաստվում է լուրջ ճակատամարտի բռնվել անգլիական նաւատորմի հետ Հիւսիսային ծովում։

◆ Լօնդօնի լօրդ-Մէրը կոչ է ուղղել բազմամիլիօն քաղաքի երիտասարդներին, յորդորելով գրվել կամաւոր զինւորներ թշնամու դէմ կռւելու համար։

◆ Կրակովի ռմբակոծութիւնը ռուս զօրքերի ձեռքով շարունակվում է։

◆ Կօպէնհագէնից յայտնված տեղեկութիւնների համաձայն, աւստրիացիների և գերմանացիների կորուստները մինչև այժմ հաւասարվում է մօտ երկու միլլիօն մարդու։

◆ Վիլհէլմ կայսրը հրաման է արձակել՝ «կամ վերցնել Կալէն և կամ մեռնել»։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲՕՅԿՕՏԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիացիները սրամիտ միջոց են գտել գերմանական ապրանքները բօյկօտի ենթարկելու։ Մի քանի մեծ խանութներ ցուցադրել են գերմանական արտադրութեան ապրանքներ։ Այսպիսով ժողովուրդը ծանօթանում է բօյկօտի ենթարկված գերմանական ապրանքների հետ, և ծանօթանալով զգուշանում է մի ուրիշ անգամ այդ ապրանքներից չը գնել։ Ժողովուրդը, իսկապէս, շատ սառն է վերաբերվում գերմանական ապրանքներին, և նոյնիսկ այն իրերը, որոնք անհրաժեշտ են տնային տնտեսութեան համար, չեն գնում, որովհետև գերմանական են։ «Այս արդէն դաս կարող է լինել,—ասում է ռուսական մի թերթ,—որ անգլիացիները իրանք զարգացնեն իրանց արդիւնաբերութիւնը այն անհրաժեշտ իրերի, որոնց մինչև այժմ ստանում էին Գերմանիայից»։

ՀԱՅ ՎԻՐԱՒՈՐՆԵՐԸ ԿԻԵՎՈՒՄ

Կիէվ, 7 նոյեմբերի

Կիէվ քաղաքի հիւանդանոցում կան բաւական թւով հայ վիրաւոր զինւորներ, որոնց պարտքս եմ համարում այցելել և հոգևոր մխիթարութիւն տալ։

Սրանք համարեա բոլորը աւստրիական սահմանամասից են եկած և վիրաւորվել են Կարպատեան լեռնաշղթայի մօտ։ Մինչև այժմ այցելել եմ 10 հիւանդանոց, որտեղ կան 60-ի չափ հայեր, թեթև վիրաւորվածներ ոտքից կամ ձեռքից։

Ահա այդ վիրաւորների ցուցակը։ Այցելութիւնս շարունակում եմ և հետզհետէ կուղարկեմ միւսների ցուցակները։

Խորէն ք. Մնացականեան

* * *

Վիրաւորների ցուցակը

1) Համբարձումեան Առաքել (Գանձակի նահ.), 2) Մելքոնեան Սամսոն (ղարաբաղցի), 3) Հայրապետեան Նիկ. (նուխեցի), 4) Օսեփեան Մկրտիչ (Գանձ. նահ.), 5) Սարգսեան Սրապիօն (ախալցխացի), 6) Աբրահամեան Աբրահամ (Գանձ. նահ.), 7) Ալթունեան Համբարձում (թաղլարեցի), 8) Ալլահվերդեան Յակովբ (Գանձ. նահ.), 9) Մելքումեան Դաւիթ (Գանձ. նահ.), 10) Պօղոսեան Լևոն (Գանձ. նահ.), 11) Գասպարեան Մարտիրոս (ղարաբաղցի), 12) Գրիգորեան Թումաս (Գանձ. նահ.), 13) Տէր-Օհաննեան Արտաշէս (Գանձ. նահ.), 14) Հայրապետեան Լազար (ղարաբաղցի), 15) [illegible] (սիմֆերոպոլցի), 16) Թէոսեան Թաւադ (շուշեցի), 17) Սարգսեան Եփրեմ (Գանձ. նահ.), 18) Հայրապետեան Յակովբ (ղարաբաղցի), 19) Սարուխանեան Սարգիս (Երևանի նահ.), 20) Պօղոսեան Սամսոն (Գանձ. նահ.), 21) Մելքումեան Մեսրոպ (Գանձ. նահ.), 22) Հայրապետեան Հայրապետ (շուշեցի), 23) Սուլէյմանեան Սամսոն (շուշեցի), 24) Յարութիւնեան Գրիգոր (շուշեցի), 25) Բաղալեան Մկրտիչ (շուշեցի), 26) Ղազեան Շամիլ (ղարաբաղցի), 27) Աւետիսեան Սուլէյման (ղարաբաղցի), 28) Դաւթեան Յարութիւն (ղարաբաղցի), 29) Յակովբեան Խաչատուր (ղարաբաղցի), 30) Սափիեվ Արտէմ (շուշեցի), 31) Համբարձումեան Վարդան (գանձակեցի), 32) Մկրտումեան Մնացական (զանգեզուրցի), 33) Աւետիսեան Խսրով (ղարաբաղցի), 34) Բալասանեան Արամ (ղափանցի), 35) Աւանէսեան Յով-

---

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍԵՒ ԼԵՌԱՆ ԱՐԾՈՒԻԿԸ

(Ն. Բրէշկօ-Բրէշկովսկիից)

Աւստրօ-չերնօգօրական կռիւներից

IV*)

Բօժօ Պաւլօվիչի խրճիթին մօտիկ միշտ ժողովուրդ է հաւաքված լինում։ Հետաքրքրական է լսել այն մարդուն, որը յիշում է Նիկօլայ թագաւորի երեխայութիւնը։ Այն ժամանակ Բօժօ Պաւլօվիչը բոլորում էր իր 50 տարին։ Նրան քաջ երիտասարդ էին համարում։ Իր կէռ դանակով անհաշիւ թւով թիւրքերի ու ալբանների գլուխներ էր կտրել նա։

Այս վերջին պատերազմումն էլ, ասենք աչքի ընկաւ ծերունի Բօժօն։ Տարաբօշի կռւից 11 թիւրքական քթեր ու ականջներ բերաւ հետը իր հայրենի Նէգուշը։ Եւ զարմանում էր Բօժօն, լսելով չորս կողմից թէ այժմ այլ ևս այդպէս չեն պատերազմում, և քթեր կտրելը դէմ է կանօններին։

Յամառ Բօժօն լսել իսկ չէր ուզում…

— Ինձ սովորեցնել ուշ է արդէն, բայց, այ, դուք ձեր «կանօններով» կոտորեցէք այնքան մարդ, որքան ես իմ ամբողջ կեանքումն եմ մորթել թիւրքեր ու առնաուտներ…

Այդ բանում ամբողջ Չերնօգօրիայում ոչ ոք չէր կարող Բօժօ Պաւլօվիչի հետ մրցել…

Կնեազիչ Միրկօն ցոյց էր տալիս Բօժօ պապին զինւորական գործակալներին։ Լսելով որ նա հարիւր տարեկանից աւելի է, այդ «օտարերկրեայ» օֆիցէրները զմայլվում էին, սեղմում պապի ձեռքը և իսկոյն լուսանկարիչ կանչում։ Այդ՝ կոշտ միրուքով, սպիտակ բեխերով և ահագին ատրճանակը գօտեկապին խրած՝ նիհար, բայց չոր ծերունու լուսանկարը երևաց բոլոր ֆրանսիական ու անգլիական թերթերի մէջ։

Այդ խաղաղ աստեղազարդ գիշերին Բօժօն, ծխամորճը ատամների արանքում—որոնցից ոչ մէկն էլ չէր ընկել—նստել էր իր տան կողքին։ Մօտեցաւ պօստատան կառավարիչը, բոյով ու լաւ տեսքով մի մարդ՝ սև սաթի պէս փայլուն բեխերով, կարմիր, անթև արխալուխը հագին։ Բարձրահասակ, վայելչակազմ, թխադէմ Միլենա աղջիկը, մինչև ծնկներն հասնող զոյգ հաստ հիւսերով, Բօժօյի թոռը և Եանկօյի մեծ քոյրը, սենեակից դուրս բերեց սկուտեղի վրա փոքրիկ չաշկաներով սև «սուրճը»։

— Հապա ուր է Եանկօն,—հարցրեց պօստի կառավարիչ Միլօրադ Ցեմօվիչը։

— Հիւր է մնացել Կատարրօյում։ Ուրիշ ինչ պիտի անի,—պատասխանեց Բօժօն։

Մօտեցաւ փոքրիկ՝ 11 տարեկան Միլօսլաւ թոռը, բարձրահասակ ու ճկուն մի տղայ՝ Եանկօյի իսկական տիպարը։

— Դէ բեր եաթաղանները,—հրամայեց պապը։

Թոռը վերադարձաւ շուտով երկու կէռ դաշոյններով, փիրուզաներով շքեղ զարդարված՝ արծաթեայ կոթերով։ Բօժօյի սիրած զուարճութիւնն էր զինավարժութեան դասերը, որ նա տալիս էր իր թոռանը։ Թոռը յարձակվում էր. իսկ պապը պաշտպանվում։ Նստած, առանց դիրքը փոխելու, ծխամորճից ծուխը փչելով, պապը կատակելով, թեթև շարժումներով անդրադարձնում էր տղայի իր տարիքին անհամապատասխան բոլոր լուրջ ու խիզախ գրոհները։

— Լաւ մարտիկ կը լինի,—խրախուսում էր պապը։—Այսօր չէ վաղը գասպադարը՝ թագաւորը հրաման կը տայ շվաբների վրա գնալու. բոլորս կերթանք. դու էլ անելիք կունենաս…

Որպէս հմայված, կանգնած էր իր լեռնափոսում փոքրիկ Նէգուշը, Չերնօգօրիայի նախկին արքայանիստ քաղաքը։ Եւ ամեն կողմից վեր էին բարձրանում լերկ, անխօս ժայռերը, և թւում էր թէ նրանց ետքում վերջանում էր աշխարհը և սկսվում ինչ-որ խորհրդաւոր, անթափանցելի յաւիտենականութիւնը։ Իսկ հեռուն նուրբ ու քնքուշ, ինչպէս անուրջ, սիլուէտով նշմարվում է աստեղազարդ երկնակամարի վրա սուր նիզակի պէս Լօվչէն-Պլանինան։

Ամայի են լեռներում չքացող խճուղու պտոյտները։ Այնտեղից մէկը վազում է շտապով, հե ի հև։

Առաջինը ճանաչեց նրան Բօժօ պապը։

— Եանկօն է… Ու մենակ էլ չէ, այլ թնդանօթով (հրացանով)։

Ու զգացին ամենքը, որ զուր չէր վազում Եանկօն։

— Ի՞նչ է պատահել,—հարց տուին այս ու այն կողմից։

— Շվաբները Կատարրօյից գալիս են մեզ վրա։ Մի ամբողջ բատալիօն, թօփերը (թնդանօթները) էշերի վրա բարձած։ Տեսայ անձամբ… Ես եկայ կարճ ճանապարհով, իսկ նրանք գալիս են խճուղով։ Մինչև մի ժամ Չերատօֆօ-Պետլին կը հասնեն… իսկ այնտեղից էլ դէպի Լօվչէն…

— Խելքդ կորցրել ես, ինչ է,—գոչեց պապը վեր թռչելով տեղից, տաբուրետը սուրճով միասին վայր գցելով և ըստ սովորութեան ձեռքը դէպի ատրճանակը տանելով։

— Աչքերովս տեսայ, պապ… ինձ շվաբները կազամատ էին ձգել… Դուրս պրծայ ահա… և եկայ վազէ-վազ…

Սպիտակած թաւ ունքերի տակից փայլատակեցին ծերունի Բօժօյի աչքերը։

Այս րոպէիս դարան մտէք դիրքերում… բոլորը, ով կայ Նէգուշում… Չենք տայ Լօվչէնը…

Երկու թոռներն էլ վազեցին յայտնելու բոլոր տներում… Ով քնած չէր դեռ, իսկոյն դուրս էր թռչում հրացանով, քնածներն էլ զարթնելով՝ շտապ հագնվում էին, հրացանը առնում ու վազում, ճանապարհին կապելով փամփուշտակալ գօտին։

Համախմբման կէտը Բօժօյի տան մօտն էր։ Հաւաքվեցին ութսուն չափ մարդիկ։ Ծերունիներ, հասակաւորներ, երիտասարդներ ու մինչև իսկ տղաներ։ Բօժօն հրաման տուաւ։

— Կը պառկենք լեռներում… Կը թողնենք որ մօտենան։ Եւ հէնց որ կսկսեն բարձրանալ Չերատօֆօ-Պետլի մօտից, մի մասը կը սկսի հարուածել նրանց ճակատից, իսկ միւս մասը՝ ետևից։ Այդպիսով մենք նրանց շուտ կը շփոթեցնենք…

Սև-լեռնցիները հրացաններով վազեցին խճուղով։ Եւ ապա ցրիւ գալով շղթայով սկսեցին վեր բարձրանալ դէպի երկինք խոյացող ժայռով…

Նրանց առաջնորդում էր Բօժօն իր թոռներով։

Նրանց առջև բացվում էր ընդարձակ հեռաստանը…

Կատարրօյի նաւամատոյցը երևում է հայելու պէս… Նրանից էլ հեռու, արծաթագոյն մշուշի մէջ, հալչում էր Ադրիական ծովը։ Իսկ այդ բոլորի վրա սփռւում է իր հովանին հարաւի մութ երկինքն իր պըլպլան աստղերով։

Բաշերը շղթայ կապեցին։

Նրանց գորշ մարմինները ձուլվեցին դիրքերի գորշ քարերի հետ։ Սուր հայեացքով ցած էին նայում արծիւներն ու արծուիկները։ Ո՛չ մի խօսք ու ոչ մի ձայն-ծպտուն։ Թէկուզ պատահաբար՝ հրացանի կոթն էլ է քարին կպչէր, չըխկար։

Շունչերը զսպած՝ սպասում են… Երկար չի քաշի. հրէս կերևան։ Ահա ներքևում կէս կիլօմէտրաչափ տարածութեան վրա, սև օձանման շարժուածքով նկատվում է ալպիական հրացանաձիգների զօրասիւնը ու դանդաղաքայլ բարձրանում է վեր խճուղով։ Սև-լեռան քաջերից շատերի ձեռքերը քոր են գալիս, սրտերը սկսում են բաբախել անհամբերութիւնից, ուզում են շուտ գնդակահար անել շվաբներին։ Սակայն ազդանշանը պիտի տայ Բօժօ պապը իր առաջին գնդակով։ Նա լաւ գիտէ, թէ երբ պէտք է սկսել։ Նա պառկել է այնտեղ, ուր պէտք է արճճէ քաղցրաւենիքներով դիմաւորել ճակատից, և նրա կողքերին տեղ են բռնել երկու բաղդաւոր, հպարտ՝ այդպիսի հարևանութեամբ, թոռնիկները։ Եանկօն հանում է աւստրիական ժանդարմից խլած մանլիխերը։

Ո՞ւր է նա այժմ, շվաբը։ Անդունդը գլորվեց, ոսկորներն էլ չի լինի ժողովել… Բոլորովին ջարդ ու փշուր է եղել, երևի…

Զօրասիւնը ճիգ է թափում որքան կարելի է առանց աղմուկի բարձրանալ, բայց և այնպէս վերևում լսելի է լինում հանդարտ շարժվող 1000 հոգու քայլուածքի խուլ ձայնը։ Օֆիցէրների ցածրաձայն կանչերը. Սիգարների երբեմնակի առկայծումը… Զնգում հաննէս (ղարաբաղցի), 36) Ջանդամուրեան Աւագ (Գանձ. նահ.), 37) Ասլանեան Մկրտիչ (բաթումցի), 38) Մանուչարեան Իսահակ (ղարաբաղցի), 39) Սարգսեան Կարապետ (գանձակեցի), 40) Զուլհակեան Սաղօմօն (Գանձ. նահ.), 41) Գրիգորեան Թադէոս (ղարաբաղցի), 42) Առաքելեան Բէգլար (աղբուլախցի), 43) Սիմէօնեան Կարապետ (Գանձ. նահ.), 44) Արթունեան Յովհաննէս (գանձակեցի), 45) Թամազեան Թաթուլ (Թիֆլիսեցի, վրացախօս հայ, հիւանդացել է տենդով, այժմ առողջանալու վրա է), 46) Տէր-Մարտիրոսեան Սիմոն (ղափանցի), 47) Գրիգորեան Միսակ (Երեւանի նահ.), 48) Այվազեան Արշակ (ղարաբաղցի), 49) Ջատիկեան Վասօ (Բաթումի գաւ.), 50) Շահնազարեան Եագոր (Թիֆլիսի նահ.), 51) Պետրոսեան Գասպար (նուխեցի), 52) պրապորշչիկ Մելիք-Գասպարեան Խաչատուր (բագուեցի ուսանող), 53) Տէր-Յովհաննիսեան Գէորգ (Սուրբ Խաչ քաղաքացի), 54) Մուսայէլեան Յովհաննէս (զանգեզուրցի), 55) Լալաբէկեան Աղաջան (շուշեցի)։

---

*) Տես «Մշակ» № 259։

ԶԻՆՈՒՈՐԻ ՆԱՄԱԿԸ

Մի զինուոր գրում է իր օֆիցերին, որի մօտ սպասաւոր է եղել.

«1914 թ. 30 հոկտեմբերի։ Ձեր առողջութիւնն եմ ցանկանում, ձերդ ազնուութիւն. խոնարհ ողջոյն եմ ուղարկում ձեզ։ Յայտնում եմ ձեզ, որ ես թեթև վիրաւորված եմ աջ ոտքից. վէրքը անվտանգ է, այնպէս որ կը պառկեմ մի երեք շաբաթ և Աստուծով նորից կուի կերթամ։ Միայն պէտք է խնդրեմ, որ ինձ թիւրքաց սահմանը ուղարկեն իմ հայրենիքը պաշտպանելու, իսկ եթէ այնտեղ չը թողնեն, նորից աւստրիացիների կողմը կերթամ։ Ես վիրաւորվել եմ Պերեմիշլի մօտ. եղել եմ Եարոսլաւի կռւում. քաղաքը բոլորովին քանդված է և աւերված։

«Հիւանդանոցում վիրաւորներին լաւ են մտիկ անում, իսկ դիրքերում երեք օրը մի անգամ էինք ճաշում. հաց մի քանի օր սկի չէին տալի. տալիս էին միայն սուխարի։ Դրա համար էլ շնորհակալ ենք Աստուծուց, որովհետև կռիւը այնպէս սաստիկ էր, որ շատ դժուար էր հաց և ուտելիք հասցնել։

«Ծխախոտ տալիս էին դիրքերում, իսկ հիւանդանոցում պապիրոսներ էլ տալիս են, այնպէս որ սովորել եմ ծխել։

«Աւստրիայում, Պերեմիշլի մօտ ձիւն չը կայ, բայց ցուրտ է. իսկ Կարպատեան սարերի վրա ձիւն է ու բուք...»։ («Кав».)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք Թիֆլիսում պ. Միհրանից 3 րուբլի։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 259) ունենք ստացած ընդամենը 236 րուբլի։

ՅՕԳՈՒՏ ՎՆԱՍՎԱԾ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ

Ստացանք՝ 1) Զաքաթալայից՝ Աստ. Բէկ-Յովսէփեանից—3 րուբլի, 2) Թիֆլիսում՝ պ. Միհրանից—3 րուբլի։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 259) ունենք ստացած ընդամենը 73 ր.։

ՅՕԳՈՒՏ ՎԻՐԱՒՈՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ

Ստացանք Զաքաթալայից, Մ. քահ. Տէր-Մկրտչեանի միջոցով, հանգանակված Միք. Մալեանցի տօնախմբութեան առիթով տեղի ունեցած ընտանեկան մտերիմ փոքրիկ շըրջանում—22 ր. 35 կոպ., որպիսի գումարը, ըստ նուիրատուների ցանկութեան, պէտք է յանձնել Հայկական Կենտրոնական Կոմիտէին։

ՏԱԼՈՒ ՉԱՓԸ

Մարդկութեան մեծագոյն Վարդապետը մի անգամ նստել էր Երուսաղէմում եղող տաճարի գանձանակի մօտ և նայում էր, թէ տաճարից դուրս եկողներն ի՛նչպէս են փող գցում այդ գանձանակի տուփի մէջ։ Շատ հարուստներ մեծ գումարներ էին գցում, սակայն մի աղքատ որբևայրի էլ եկաւ և գցեց այնտեղ երկու լումա, որ մեր հաշւով կէս կոպէկ է լինում։ Այդ ժամանակ Վարդապետը կանչեց իր աշակերտներին և ասաց նրանց.

— Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ այս որբևայրին բոլորեցը շատ գցեց, որովհետև նրանք գցում էին իրանց աւելորդից, իսկ սա գցեց իր բոլոր ունեցածը, իր կեանքի ապրուստը։

Մեր օրերում մենք էլ տալիս ենք։

Տալիս ենք զանազան կերպերով և տարբեր նպատակների համար։ Բայց ի՛նչ ենք տալիս։

Մեր սիրտը ցաւում է պատերազմի բեմի վրա եղող մեր որդիների ու եղբայրների, ծանօթների և բարեկամների համար, մեր սիրտը ցաւում է նրանց թողած կանանց և զաւակների համար, և մենք մեր ձեռքը տանում ենք դէպի մեր գրպանը և հանում այնտեղից մի դրամ, սակայն ոչ ամենամեծերից։

Մենք տալիս ենք շատ անգամ միայն այն պատճառով, որ չենք կարող չը տալ, ամօթ է, ծանօթները նայում են դէպի մեզ, գեղեցիկ հագնված օրիորդը իր քաղցր ժպիտով դէմներս կանգնում և մեր ճանապարհը կտրում է և աղերսական ձայնով խնդրում. «Նուիրեցէք մի քանի կոպէկ»։

Տալիս ենք. սակայն ի՛նչ չափով ենք տալիս։

Մեր օրերում ամենից աւելի գործածված հաշւապահութեան սիստեմը «կրկնակի» է կոչվում։ Դա նշանակում է, որ նոյն հաշիւը երկու տարբեր գրքերի մէջ է գրվում. մէկի մէջ որպէս մուտք, միւսի մէջ որպէս ելք, կամ ընդհակառակն։

Մեր արած նուիրաբերութիւնների հաշիւն էլ երկու կողմ ունի, որոնցից մէկը մենք միշտ յիշում ենք և շատ շատ կըրկնում, իսկ միւսը դիտմամբ մոռացութեան ենք տալիս և աշխատում ենք, որ ուրիշներն էլ չը յիշեն։

Մենք նայում ենք գանձանակի մէջ գցըված գումարի մեծութեանը, իսկ Մեծ Վարդապետը նայում էր գրպանի մէջ մնացած գումարի մեծութեանը։

Այս հաշիւը շատ դժուար է ըմբռնել։

Օրինակ. մի մարդ 100,000 րուբլի կարողութիւն ունի և իր այդ կարողութիւնից բարեգործական նպատակով տալիս է 10,000 րուբլի. իսկ մի ուրիշի գրպանում կայ ընդամենը 2 ր., որ ինքը նախորդ օրն ստացել է իր այդ օրվայ աշխատանքի համար և դրանով պէտք է իր ընտանիքի ապրուստը հոգայ. իսկ երբ մօտենում է Կարմիր Խաչի ուսկապ կրող օրիորդը և նուէր խնդրում, սա հանում է իր գրպանից 10 կոպէկ և գցում տուփի մէջ։

Հիմա հարց է, թէ այս երկուսից ո՞րն է աւելի շատ տուել։

— Առաջինը,—ասում ենք մենք,—որովհետև նա նուիրել է 10 000 րուբլի։

— Ոչ, երկրորդը,—ասում է Մեծ Վարդապետը,—որովհետև նա իրան համար պահել է միայն 1 ր. 90 կ.։

Մենք տուածն ենք հաշւում, նա պահածն է հաշւում։

Ահա այդտեղ է տարբերութիւնը։

Հաշիւն այն չէ, թէ դու որքան ես տուել. հաշիւն այն է, թէ քեզ համար որքան ես պահել։

Բարեգործական հաշւապահութեան այս կողմն է, որ մենք համարեա միշտ մոռանում ենք և չենք կամենում ուշադրութեան առնել։

Անգլիացի մի նշանաւոր գրող, որ մեռաւ 15—20 տարի առաջ, իր գրուածքներից մէկի մէջ ասում է.

«Անցեալ օրը գնացել էի գերեզմանատուն և այդտեղ պտտում էի ու գերեզմանաքարերի վրա եղած արձանագրութիւնները կարդում։ Այդտեղ ես զարմանալով տեսայ, որ բոլորն էլ եղել են մարդասէր, ընկերասէր, ողորմած, գթառատ, առատաձեռն և այլն, և ես ու ես մտածեցի, թէ ապա ո՞րտեղ են թաղված հպարտները, կըծծիները, ագահները, արծաթասէրները, ուրիշներին օրինաւոր կամ ապօրինի ճանապարհներով կողոպտողները, անգութները։ Վերջապէս մի գերեզմանի վրա էլ գտայ այսպիսի մի արձանագրութիւն. «Ինչ որ պահել էի, այն ես կորցրի. ինչ որ ցրվել էի, այն մնացել է ինձ»։

Ո՛րքան խորիմաստ և ճշմարիտ մի արձանագրութիւն։ Մեր պահածը մերը չէ, որովհետև շուտ թէ ուշ պիտի թողնենք ու գնանք այս աշխարհից։ Սպանիական մի առած ասում է. «Մարդու առաջին (մանկական) և վերջին (պատան) հագուստները գրպան չեն ունենում»։ Սակայն ինչ որ տալիս ենք նեղութեան մէջ եղող մեր ընկերին կամ նրա ընտանիքին, տալիս ենք որբի կամ որբևայրու արտասուքը սրբելու համար, տալիս ենք մերկին հագցնելու, քաղցածին կերակրելու, փախստականին խնամելու համար, դա իսկապէս մնում է մեր հաշւեմատեանի մէջ արձանագրված որպէս մուտք. դա մերն է, դա մենք չենք կորցրել։

Ուրեմն ի՛նչ չափով պէտք է տալ, ընդհանուր եկամուտի քանի՞ տոկոսը։

Ահա այդ չափը որոշելու համար մի շատ հեշտ միջոց։

Հաշւեցէք, թէ որքան էք ծախսում դուք ծխախոտի, խմիչքների, զանազան պրօժեկտօրների, թղթախաղի, պիկնիկների, խընճոյքների, զարդ ու զարդարանքի և աւելորդ զուարճութիւնների վրա. այդ բոլորից դուք շատ հեշտութեամբ կարող էք ձեռք վերցնել. և դրանց փողը գործածէք բարենպատակ գործերի համար. դրանով դուք ոչնչից ոչինչ չէք կորցնում։ Եւ յետոյ՝ հրէայ ժողովրդի վրա պարտականութիւն էր դրված բոլոր եկամուտներից տասանորդ—այսինքն 10%—տալ հոգևորականութեանը։ Եւ ինչ որ հնարաւոր էր և է մէկ ազգի համար, հնարաւոր է նաև միւս ազգի համար։ Ուրեմն՝

1) Ընդհանուր եկամուտի մի տասներորդը և 2) աւելորդ զուարճութիւնների համար վատնած գումարները։

Ահա մեր առաջարկած չափը, մի չափ, որը ոչ մէկի համար դժուար չի լինի կատարել։

Այդպէս անելով մենք լիակատար օգնութիւն հասցրած կը լինենք ներկայ պատերազմի պատճառով նեղութեան մէջ ընկածներին։

Մ. Դերձակեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԻՒՂԵՐԻՑ

Յօգուտ հայ կամաւորների

Պեատիգորսկ, 10 նոյեմբերի

Ամսիս 9-ին, երեկ. ժամը 8-ին, ժողով էր նշանակված հայոց ուսումնարանի դահլիճում, հոգալու հայ կամաւորների և նրանց ընտանիքների կարիքները։ Ժողովին նախագահում էր Ե. Սվէշնիկեան, որը, ժողովը բանալով, մի քանի խօսքով ընդգծեց հայերի ներկայ վիճակը, հրաւիրելով ժողովականներին օգնել հայ կամաւորներին և նրանց ընտանիքներին ով ինչպէս և ինչ չափով կարող է։ Խօսեցին նաև մի քանի հոգի ժողովականներից դարձեալ նոյն հարցի շուրջը, որից յետոյ ընտրվեց մի յանձնաժողով, որը ըստ ցանկութեան ժողովականների կրելու է՝ «Կովկասեան կենտրոնական բիւրոյի Պեատիգորսկի ճիւղ» անունը, հսկելու է ժողովարարութիւններին՝ լինի նա փող, տաք հագուստ և թէ ուրիշ նիւթեր։ Յանձնաժողովի անդամներ ընտրըվեցին հետևեալ անձինք՝ Գ. Սուքիասեան, Ն. Ռոստովանեան, Ե. Սվէշնիկեան, Ա. Վիրաբեան, Խ. Պապովեան, Ե. Թիթրեան, Մ. Գիւրջեան, Գ. Յովսէփեան և Գ. Ասլամազեան, որոնցից առաջին երեքը ընտրվեցին նախագահ, քարտուղար և գանձապահ։ Այդ բոլորից յետոյ առանձին ստորագրութիւններով ժողովատեղում հաւաքվեց միանուագ 1318 ր. և բացի դրանից նշանակվեց առանձին ամսավճարներ մօտ 60 ր., որը շարունակվում է և այժմ։

Վաղարշակ Տէր-Աբրահամեան

Նպաստամատոյց մարմնի ընտրութիւնը

Նիժնի-Նովգորոդ, 3 նոյեմբերի

Տեղիս հայ գաղութը, թէև հայրենիքից հեռու, չէր կարող անտարբեր մնալ դէպի կատարվող անցքերը այս պատմական վայրկեաններին։ Նախ որոշվեց օգնել վիրաւոր և զէնքի կանչված զինուորների ընտանիքներին։ Բայց ի՛նչ միջոցով։ Հայկական կենտրոններից այնքան հեռու ենք, որ ուղղակի օգնել չենք կարող. մնում էր միանալ եղած միութիւններից մէկին՝ Էջմիածնին, Թիֆլիսի հայկական կոմիտէին, «Մշակին» կամ Մոսկվայի հայկական կոմիտէին։ Ահա այս անորոշ դրութեան մէջ անսպասելի կերպով մեզ մօտ եկաւ Մոսկվայից՝ տեղի հայկական կոմիտէի անդամ Կարէն Միքայէլեանը, որը եկել էր այդ կոմիտէի անունից երկու յանձնարարութիւններով. առաջին՝ ծանօթացնել Նիժնի-Նովգորոդի հայկական գաղութին իրերի ներկայ դրութեան հետ և երկրորդ՝ առաջարկել մեզ միանալ այդ կոմիտէին։

Ի՞նչ ասել կուզէ, որ նրա առաջարկութիւնը, այն է՝ միանալ Մոսկվայի կոմիտէին, մեր գաղութի կողմից ընդունվեց գրկաբաց և շնորհակալութեամբ, որից յետոյ ընտրեցինք մի վարչական մարմին, բաղկացած նախագահ Տէր-Զաքարեանից, օգնական Մինասեանից, գանձապահ Խուտիկեանից և քարտուղար Ե. Պօղոսեանից։

Գրիգոր Պօղոսեան

Սագարէջօ գիւղի դպրոցի բացումը

Սագարէջօ գիւղ, 10 նոյեմբ.

Այս գիւղը, որը ունի մօտ 100 տուն հայ բնակիչ և որը Թիֆլիսից հեռու է հազիւ 20 վերստով, մինչև օրս զուրկ է եղել մայրենի դպրոցից, որի կարիքը մեր օտարախօս և օտարամոլ գիւղերում ամենակենսական պահանջն է ու նրա գոյութեան առաջին պատուանդանը։

Ամսիս 2-ին բացվեց Սագարէջօ գիւղի դպրոցը, որի նախաձեռնողը և նրա մասին հոգացողը եղել է Դ. աւ. ք. Մամիկոնեան։

Գիւղում կան մօտ 150 երկսեռ աշակերտացուներ, սակայն դրա մի-երրորդ մասը հազիւ է ընդունված մի դասարանից բաղկացած դպրոցում, որի ծախսի մի մասը՝ 200 րուբլի՝ հոգում է Բար. Ընկ.-ը միջնորդութեամբ վերոյիշեալ քահանայի։

Կ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ երեկոյ կովկասեան ռազմաբեմը ուղևորվեցին Մեսրոպ և Խորէն եպիսկոպոսները, Շիրվանզադէ, Յովհ. Թումանեան և Յովսէփ Խունունց։

◆ Երէկ, ամսիս 15-ին, ռազմադիրքերը ճանապարհվեց Բագու քաղաքի կահաւորած սանիտարական գնացքը։ Այդ գնացքը իր հետ տարաւ տաք իրեր և սննդական կէտերի համար բոլոր անհրաժեշտ սննդական ու վիրակապային մթերքներ։ Այդպիսի կէտեր կան Սարիղամիշում, Խանդարում և Կարաուրգանում։

◆ Բայազիդի շրջանում գործող զօրքի համար ուղարկվել են տաք իրեր և չոր մթերքներ։ Իրերը տարել է Բագուի քաղ. դումայի իրաւասու Սերեբրեակով։

◆ Երէկ առաւօտեան Թիֆլիս բերվեց թիւրք զօրքի դէմ մղված կռւում վիրաւորված հայ կամաւորների խմբապետ Դրօն։

◆ Թիֆլիս են բերված թիւրք գերիներ. նրանց մէջ կան մի քանի թիւրք օֆիցերներ։

◆ Կանանց քաղաքային կոմիտէտը թիւրքական սահմանի ռազմաբեմն է ուղարկել 500 տաք փուֆայկա։

◆ Վաճառականների հիմնած լազարէթի վարչութիւնը որոշել է վիրաւոր զօրականներին ուրախացնելու համար շաբաթը մի անգամ կինեմատօգրաֆ սարքել զինուորական կեանքից պատկերներ ցոյց տալու, իսկ կիրակի օրերը լարային երաժշտական համերգ կազմել Ստուպէլի ղեկավարութեամբ, որ նուագում է Թիֆլիսի ժողովարանում։

◆ Վ. Ս. Եղիազարեան վաճառականների լազարէթին նուիրել է 200 րուբլի։

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրօն վերանուանված է համառուսական քաղաքների դաշնակցութեան կովկասեան ճիւղ։

◆ Համառուսական քաղաքների դաշնակցութեան Կովկասի ճիւղը հրատարակելու է իր «տեղեկատուն», որի մէջ տպագրվելու են տեղեկութիւններ վիրաւորներին տեղաւորելու և խնամելու մասին։

◆ Համառուս. քաղաքների միութեան կովկասեան ճիւղը առաջարկել է Բագուի, Դերբենդի, Վլադիկավկազի և Պեատիգորսկի քաղաքային վարչութիւններին վիրաւորների համար նոր լազարէթներ հիմնել։

◆ Քաղ. վարչութեան միջնորդութեան (Բագուից նաւթ բերելու մասին) հետևանքով, երկաթուղային վարչութիւնը առաջարկել է պահանջված քանակութեամբ վագոններ։ Այնպէս որ քաղաքում շուտով մեծ քանակութեամբ նաւթ կը լինի։

◆ Վաղը, ամսիս 17-ին, Դրամատիկական Ընկերութեան երկուշաբթի օրվայ հերթական ներկայացմանը առաջին անգամ ներկայացվելու է ֆրանսիացի հռչակաւոր բանաստեղծ Ռոստանի յայտնի «Ծնորքներ» պիէսը, որ թարգմանել է Դրամատիկական Ընկերութեան խորհրդի անդամ լեզուագէտ և հմուտ թարգմանիչ պ. Ա. Եզեկեանը։ Նաև խաղացվելու է «M-elle Ֆիֆի» պիէսը, որի նիւթը վերցված է ֆրանս-պրուսական պատերազմական կեանքից։ Վերոյիշեալ ներկայացման ռեժիսսորութիւնը խորհրդի առաջարկութեամբ ստանձնել է խորհրդի անդամ պ. Ե. Ձմշկեանը, որի ղեկավարութեամբ կատարվում են նաև փորձերը։

Վրիպակ.—«Մշակի» № 259-ում, «Սև լեռան արծուկի» մէջ հինգերորդ կոլոնի կէսում տպված է «աջողութեան դէպքում՝ ես առաջինը կը շնորհաւորեմ ձեզ ոսկէ ձունով»։ Պէտք է լինէր՝ ոսկեգեղմով (շքանշանով)։

ԿՈՎԿԱՍ

◆ Նոր-Բայազէթից մեզ գրում են. «Հացաբոյսի կալսելը Նոր-Բայազէթի շըրջանում, եղանակների աննպաստ լինելու պատճառով, դեռ չէ վերջացել։ Տեղ-տեղ շինականները շատ դէզեր պահում են գարնանը ծեծելու։ Հացաբոյսը տարվայ անձրևային լինելուց շատ էր առատ, բայց հացահատիկը, յետագայ աննպաստ պայմանների պատճառով, համեմատաբար քիչ ստացվեց, և այն էլ ոչ լաւ տեսակի»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Գօրիի «Ախալի Քարթլի» վրաց լրագրի Թիֆլիսի թղթակիցը այդ լրագրում տպված մի յօդուածով տեղեկացնում է, որ Թիֆլիսում Մելիք-Ազարեանի տանը գտնըվող Աւանեանի մագազինի վիտրինայում ի ցոյց է դրված ոսկէ և արծաթէ թելով կարված մի հրաշալի վարագոյր մետաքսից։ Զանազան պատմական նկարներով զարդարված այդ վարագոյրի վրա գրված է 1773 թ.։ Գրուածքից երևում է, որ նա սեփականութիւն է Թիֆլիսի Սիոնի մայր տաճարի։ Աւանեանը յայտնել է, որ ինքը այդ վարագոյրը Սամարղանդի վաճառական Հաջի-Իսմայիլ-օղլիից գնել է 4000 րուբլով և ծախում է 5000 րուբլով։ Յօդուածագիրը, հրաւիրելով Սիոնի աւագ-երէցի ուշադրութիւնը, յիշեցնում է նախ՝ պարզել, թէ ե՞րբ է կորել այդ վարագոյրը և ինչպէս է ընկել Աւանեանի ձեռքը, և երկրորդ՝ ամեն միջոց գործ դնել վերադարձնելու Սիոնին իր սեփականութիւնը։

◆ Պետական Դումայի անդամ Ա. Ձխէնկէլին ճանապարհորդելով իրան ընտրողների շրջանում մտել է Սամուրզաղան-Աբխազէթի գիւղերը, խորհրդակցական ժողովներում տեղն ու տեղը պարզել է անբերրիութեան պատճառով առաջ եկած կարիքների մեծութեան չափը և խոստացել է միջնորդելու կառավարութեան առաջ կարօտութեան մէջ գտնվող գիւղերին նպաստներ բաժանելու մասին։ Նա գիւղացիներին տուել է անհրաժեշտ խորհուրդներ և խրատներ այն մասին որ պատերազմի երկիւղի ազդեցութեան տակ գիւղացիները, ինչպէս այդ նկատվում է, չը ցրվեն այս ու այն կողմը, մէկը միւսից անգիտակ կերպով, այլ գաղթելու անհրաժեշտ կարիք եղած դէպքում՝ կատարեն այդ միացեալ համաձայնութեամբ, որպէսզի թէ հարուստը և թէ աղքատը հնար ունենայ ապահով կերպով մէկ տեղից միւսը փոխադրվելու, ի հարկէ, կարեւոր դէպքում և ոչ զանազան լուրերի ազդեցութեան տակ։ Ձխէնկէլին եղել է Քութայիսում և Սուխումում, ուր կազմվել են մասնաժողովներ գաղթողների դրութիւնը ապահովելու նպատակով։

◆ Քութայիսում նոյեմբերի 3-ին Թիֆլիսի դատ. պալատի սէսսիան քննել է վրաց «Ձվէնի Էրի» (մեր ազգը) լրագրի խմբագիր Ս. Գերսամիայի գործը, որ մեղադրվում էր իր լրագրում տպված՝ Թ. Սախոկիայի մի յօդուածի համար։ Դատարանի առաջ նա պաշտօնապէս յայտնել է, որ ինքը աւտօնօմիստ է և դրա համար էլ զետեղել է յօդուածը։ Մեղադրեալին դատարանը, «Ս. Փ.»-ի տանելով, մեղաւոր է ճանաչել և ենթարկել է մի տարով բանտարկութեան։

ին միտրալիօզներով բռնված էշերի սըմբակները քարերին զարնվելուց։

Զօրասիւնը աշխուժով դուրս է գալիս խճուղուց ու բարձրանում սարը։ Առաջ են շարժվում դժուարութեամբ։

Բօժօն նշան դրեց։ Լսվեց գնդակի կըտրուկ որոտը, արձագանք տալով սարերում։ Եւ մէկը, օրօրվելով, վայր ընկաւ լեռնային փոքրահասակ ձիու վրայից։ Դա բատալիոնի հրամանատար բարօն Տրօպպաուն էր։

Գնդակները տեղացին ամբողջ գծի վրա, բայց ամենաուժեղ կրակը կենտրոնացել էր երկու ծայրերի վրա։

Զօրասիւնը իրար խառնվեց։ Վիրաւոր էշերը դէս ու դէն էին ընկնում՝ շարքերը խանգարելով։ Ամեն մի համազարկը տապալում էր տասնեակ ալպիական հրացանաձիգներ։ Օֆիցէրները աշխատում էին անհաբեկութեան առաջն առնել։ Կատաղած, սարսափից նրանք ատրճանակներով ծեծում էին զինուորներին՝ ստիպելով կրակել... Սակայն ո՞ւմ դէմ, անտեսանելի թշնամու դէմ, որն օգտվելով բնական ամրութիւններից, պահ մտած՝ վերից կրակում էր ամեն մի քարի տակից, ամեն մի ճեղքից։

Առաջապահ մասը, որը արդէն սարն էր բարձրացել, ամենից շատ վնասվեց գնդակների տարափից։ Սպանվածներն ու վիրաւորները ընկնում էին ցած ու խառնում շարքերը։

Օֆիցէրները կարողացան մի քանի անկարգ համազարկեր ուղարկել։ Սակայն աւստրիական գնդակները շփփալով զարնըվում էին քարերին, որից սև-լեռնցիները ոչ մի կորուստ չունէին։ Քաջերը հազիւ էին կարողանում լցնել իրանց այրվելու չափ տաքացած հրացանները։ Նրանց ամեն մի համազարկը հնձում էր աւստրիացիներին։ Քըքրված բատալիոնը քայլ առ քայլ նօսրանում էր։ Արդէն բոլոր օֆիցէրները ընկել էին։ Հազիւ թէ մնում էր զինուորների կէսը։

Առաջապահներից շատերը հրացանները ձգելով փախչում էին դէպի ցած, գլորվում ու ընկնում՝ այլևս երբէք վեր չը կենալու համար...

Սև-լեռնցիները շարունակում էին հնձել։ Մի քանի հոգի վիրաւորվել էին իրանցից, բայց անվտանգ։ Որն ուսից, որը՝ ձեռքից։

Հրացանների որոտի միջից ներքևից լըսվեց սերբերէն.

— Սգօտա... Սգօտա...

Աւստրիացիք անձնատուր էին լինում, միայն թէ ահեղ, անտեսանելի թշնամին վերջ դնի այդ սարսափելի ջարդին։

Անվնաս մնացած օֆիցէրները փորձեցին խելքի բերել զինուորներին, ուզում էին միտրալիօզներով ռմբակոծել ժայռերը, բայց կատաղած զինուորները, մոռացած որևէ կարգապահութիւն, պատասխանում էին հրացանի կոթերով...

Բօժօն ընդունեց։ Բայց որպէսզի դաւաճանութիւն չը պատահի, պահանջեց վերից, որ շվաբները իրանց հրացանները հաւաքեն ու ցած դնեն բոլորը միասին։ Կէս ժամ առաջ կազմ առաջ խաղացող զօրասիւնը՝ այժմ ոչխարի հօտի նման հնազանդվեց։ Սև-լեռնցիները իջան իրանց դիրքերից, ու առաջներն արած՝ քշեցին անզէն բատալիոնի մնացորդը։

Մի խումբ իւնակներ բարձեցին էշերը շվաբների մանլիխերներով։

— Հը՛, ի՛նչ է. առա՞ք Լօվչէնը, սրիկայ աւստրիացիներ,—լսվում էին սև-լեռընցիների շարքերից։

Ալպիական հրացանաձիգները, փետրաւոր գլխարկներով, նոր համազգեստներ ու նեղ անդրավարտիք հագած, ամօթահարութիւնից գլխիկոր լռում էին։

Վիրաւորված էր Եանկօն գնդակով ուսից, բայց, քանի տաք էր վէրքը, ցաւ չէր զգում։ Վէրքը մի կերպ կապեց պապն ու իսկոյն ուղարկեց Նեգուշ։ Այնտեղից նրան տարան Ցետինեի կադէտների կորպուսի հիւանդանոցը։ Եւ նա պառկել էր այն միևնոյն դասարանում, ուր սովորում էր 2½ տարի առաջ, մինչև թիւրքական պատերազմը։

Մի առաւօտ, երբ նա հայեացքը յառել էր դասարանական գրատախտակին, որը յայտնի չէ թէ ինչու չէին դուրս տարել այդտեղից, նրա մահճին մօտեցաւ, իր ադիւտանտի ու բժշկի ուղեկցութեամբ, մի գեր լայնաթիկունք ծերուկ չերնոգօրական հագուստով։

— Հը, ինչպէս է առողջութիւնդ, մամչէ...

— Խվալա, գասպադար,—ժպտաց արծուիկը, փորձելով վեր կենալ։

Նիկոլայ թագաւորը, ձեռքը դնելով Եանկօյի առողջ ուսին՝ համբուրեց նրա ճակատըն ու կախեց կրծքին շքանշանը...

Իսկ պատուհանից պայծառ արևի շողքի տակ իր հեռաւոր, անմատչելի ու գեղանի, ինչպէս անտեսանելի ամպերից վեր ապրող աստուածների խորան, ձիւնապատ կատարով խրոխտաբար նայում էր Լօվչէնը...

Լ. Դանիէլեան

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Սալօնի ուրբաթ օրվայ հերթական երեկոյթը, ինչպէս և նախորդ անգամ, տեղի ունեցաւ բժշկապետ Բ. Նաւասարդեանի նախագահութեամբ։ Այս երեկոն ևս նուիրված էր «Հայկական հարցին»։ Որպէս զեկուցանող հրապարակ եկաւ Սալ-Ման (Ա. Աթանասեան) և իր 1½ ժամ տեւող զեկուցման ընթացքում՝ տուեց 1877—1878 թ. թ. ռուս-թիւրքական պատերազմի մանրամասն նկարագիրը սկսած պատերազմական պատրաստութիւններից մինչև Դէվէ-Բօյնուի առումը։ Դասախօսը շօշափեց պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ հայ հասարակական տրամադրութիւնն ու այն սպասելիքները, որ կար մեր ղեկավար շրջաններում դէպի այդ պատերազմը. այնուհետև անցաւ պատերազմական գործողութիւններին, Կարսի պաշարմանը, Արդահանի առմանը, գեներալ Տէր-Ղուկասովի արշաւանքին դէպի Ալաշկերտ և Դայար և նրա նշանաւոր նահանջին, Զիվինի անաջող կռուին, Կըզըլ-Թէփէի, Ալիարի ու Ալաջայի ճակատամարտներին և ռուսաց զօրքի դէպի Էրզրում գործած արշաւանքին։

Ի նկատի ունենալով նիւթի ընդարձակութիւնը, դասախօսը հնար չունեցաւ սպառելու այն գլխովին, և շարունակութիւնը յետաձգվեց յաջորդ ուրբաթ օրվան հերթական երեկոյթին, ուր դասախօսը կանգ է առնելու Կարսի առման, պատերազմի վախճանի և հայ ժողովրդի այդ պատերազմում կատարած դերի վրա։

Դահլիճը լի էր հետաքրքրվողներով։ Հարցի շուրջ մտքերի փոխանակութիւնը ևս յետաձգվեց յաջորդ ուրբաթ օրվան։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

«Մշակն արժանի է վարձոյ իւրոյ»։

Արտիստ Շվէցը իր բենեֆիսի օրը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 14-ին, դարձաւ Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան օվացիայի առարկայ։ Վերջինս բուռն ծափահարութիւններով, ծաղկեփնջերով ու արժէքաւոր իրերով իր ջերմ վերաբերմունքը արտայայտեց բարեխիղճ ու տաղանդաւոր արտիստին։

Բենեֆիցիանտը «Ռուսալկայի» մէջ հանդէս եկաւ իր արմատական դերերից մէկի — Ջրաղացպանի դերում։ Տպաւորիչ էր նա մանաւանդ երրորդ արարուածում, ուր նա իր միակ սիրասուն աղջկայ կորուստն էր երգում խելագար կարօտով։

Ջրաղացպանի դուստր՝ Նատաշի դերը կատարում էր տ. Մակսիմօվան։ Այս համեստ դերասանուհին հազուագիւտ է բեմ ելնում, մինչդեռ նա իր խաղով ու թէև փոքր, սակայն մշակված ու գեղեցիկ ձայնով շատ օգտակար ոյժ է ներկայ օպէրային խմբի մէջ։ Ու միայն կշտամբելու է օպէրային վարչութիւնը՝ Մակսիմօվային ուշ-ուշ բեմ հանելու համար։

Ռօզինսկին իշխանի դերը իր ոյժերին ներածի չափ կատարեց աջող։ Մի անգամ ևս ընդգծելու ենք, որ այդ դերասանը ունի հարուստ ռեպերտուար և առաջադիմում է։

Վատ չէր տ. Եվգենիեվան իշխանուհու դերում։

Հաճելի տպաւորութիւն գործեց տ. Տրուֆֆին Օլգայի փոքր դերը օրինակելի կերպով տանելով, մանաւանդ իր քնքոյշ երգեցողութեամբ։

Օրկէստրը, Տրուֆֆիի ղեկավարութեամբ, ինչպէս և բալէտը հարթ անցան։

Ներկայացումից առաջ օրկէստրի նուագածութեամբ խումբը երգեց ազգային օրհներգը երեք անգամ։

Ե.

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մենք ստացանք «Народы Области» վերնագրով ռուսական մի նոր ամսագրի առաջին համարները։ Ամսագիրը հրատարակում է «Ռուսաստանի ազգութիւնների միութեան ընկերութիւնը»։

Առաջնորդող յօդուածի մէջ խմբագրութիւնը ասում է ի միջի այլոց.

Բոլորովին անկախ այս և այն քաղաքական կուրսից՝ մենք մեր նպատակներից մինն ենք դարձնում և Ռուսաստանի ազգութիւնների փոխադարձ ծանօթութիւնը։ Մեզ թւում է, որ այն պայմանները, որոնց մէջ պէտք է ապրեն ռուսական երկիրները, չեն խափանում նրանց միացման մի հզօր ամբողջութեան մէջ և որ մեր դարաշրջանի հիմնական նպատակը բնաւ այնքան անիրագործելի չէ, ինչպէս այդ թւում է կենտրոնացման ուղղութեան ներկայացուցիչներին։ Մենք տեղ պէտք է տանք, ըստ հնարաւորութեան, բոլոր այն աշխատութիւններին, որոնք ի նկատի ունեն մեր գլխաւոր նպատակը՝ Ռուսաստանի ազգութիւնների միութիւնը։

Ապա ամսագիրը առաջ է բերում ընկերութեան կանոնադրութիւնը, որի առաջին յօդուածը ասում է. «Ընկերութիւնը իրան նպատակ է դնում ռուսական կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգութիւնների պատմութիւնը, կենցաղի և կարիքների ուսումնասիրութիւնը, այն նկատումով, որ նրանց մօտեցնի կուլտուրապէս, տնտեսապէս և զարգացնէ նրանց մէջ համապետական գիտակցութիւնը, լիակատար յարգանք պահելով ամեն մի ազգութեան անհատական առանձնայատկութիւնների հանդէպ»։

Իր 3-դ, 4-դ և 5-րդ համարների մէջ ամսագիրը հաւասարապէս տեղ է տուել Ռուսաստանի զանազան ազգութիւններին՝ լեհերին, հրէաներին, հայերին, վրացիներին և թիւրքերին վերաբերեալ տեղեկութիւններ և յօդուածներ։

Ցանկանում ենք նոր ամսագրին և նրա առաջադրած նպատակին աջողութիւն և իրագործում։

*

«Մշակի» № 251-ում մենք թարգմանաբար առաջ էինք բերել վրաց «Թեմի» շաբաթաթերթի հայերի վերաբերեալ տպած յօդուածը։

Նոյն շաբաթաթերթի № 192-ում խմբագրութիւնը տպել է «Հայ ազգի հարցը» վերնագրով մի ընդարձակ յօդուած, որի շարունակութիւնը, ըստ երևոյթին, դեռ լինելու է։ Յօդուածի սկզբում, նրա վերաբերեալ տպված է խմբագրութեան հետևեալ համառօտ ծանուցումը.

Ներկայիս ստեղծված դրութիւնը առաջ է բերել հայ ազգի լինել չը լինելու հարցը։ Մեր պարտականութիւնն է վրաց ընթերցող հասարակութեանը տալ այն տեղեկութիւնները, որոնք գտնվում են մեր ձեռքի տակ։ Այս տեղեկութիւնները գլխաւորապէս քաղված են «Баку» լրագրում տպված յօդուածներից. իսկ եթէ ապագայում յայտնվեն այնպիսի աղբիւրներ, որոնք կը տան մեզ այս հարցի վերաբերեալ նոր տեղեկութիւններ, մենք այն դէպքում կը հաղորդենք և այդ տեղեկութիւնները։ Ընդհանրապէս մենք վերին աստիճանի կարևոր ենք համարում, որ վրաց հասարակութիւնը գիտենայ, թէ ինչ է կատարվել և ինչ է կատարվում հարևանութեան մէջ։ Այսպիսի տեղեկութիւնը կարևոր է հէնց մեր երկրի բարեկեցութեան համար։

Ապա՝ այդ ծանուցումից յետոյ՝ սկսվում է յօդուածը, որ վերաբերում է 1860 թւականին Կ. Պոլսում հիմնված հայ ազգային ժողովին և նրա ունեցած նշանակութեանն և գործունէութեանը։ Վեց ընդարձակ սիւնակներից բաղկացած և դեռ շարունակելի այդ յօդուածում մանրամասնօրէն նկարագրված են եւրօպական դիպլոմատիայի հետ ազգային ժողովի և նրա ներկայացուցիչների ունեցած բոլոր բանակցութիւնները հայկական հարցի լուծման և թիւրքահայերի ստրկական վիճակի բարւոքման մասին։

Խօսելով թիւրքահայերի 1876—77 թւականներին երկու բանակների բաժանված լինելու մասին, յիշված է Գր. Արծրունու «Մշակի» և Պ. Սիմէօնեանի «Մեղուի» բաժան լրագրաբանակների մասին, որոնցից առաջինը կողմնակից էր Ռուսաստանին որպէս հայ ազգի պաշտպանի, իսկ երկրորդը քարոզում էր տեղն ու տեղը հանգստութիւն, մինչև որ Թիւրքիան լուսաւորվէր և հայերի հետ միասին կազմէր հայ-թիւրքական քաղաքական միութիւն։

Այդ յօդուածի նկարագրութիւնը վերաբերում է 1876—78 թւականներին տեղի ունեցած պատմական անցքերին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուզունլար, 27 հոկտեմբեր

Յայտնում եմ շնորհակալութիւն այն անձին (որ ուզում է անյայտ մնալ), որը նուիրեց 5 րուբլի ինձ յանձնված Ուզունլարի պետական դպրոցի չքաւոր աշակերտների համար դասական պիտոյքներ ձեռք բերելու նպատակով։

Ու.-ուսուցիչ՝ Ցար. Դուրգարեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 1 նոյմ.

◆ Ազգ. կեդր. վարչութիւնը այս միջոցիս գործունէութեան բաւական լայն ասպարէզ գտած է, վասնզի ազգ. ժողովը մերձաւորապէս երեք ամիս է, որ չէ գումարուած։

Կապիտուլասիոնի ջնջումէն յետոյ բաւական խնդրոյ առարկայ եղաւ նաև պատրիարքարանի առանձնաշնորհմանց խնդիրը, որ՝ ստոյգ և վաւերական տեղեկութիւններու համաձայն՝ ջնջելու համար, մի քանի ցոյցեր կազմակերպելու ծրագիրներ կը պատրաստուէին։

Կառավարութիւնը յետոյ կերևայ թէ ժամանակի մը համար լքեց այդ ծրագիրը, վասնզի այս տեսակ ձեռնարկ մը չեղաւ։

Սակայն ազգ. շրջանակի մէջ արձագանգ գտած ըլլալով այս լուրը, շատերու կողմէ խոհեմութիւն համարուեցաւ վերջին անգամ առայժմ ազգ. ժողովը չբանալ և առանձնաշնորհմանց վրայ ուշադրութիւն գրաւող ցոյցեր չընել։

Հետևաբար ազգ. ժողովը փակ կը մնայ և վարչութիւնը բաւական ազատ կը զգայ ինքզինքը գործելու։

◆ Հայ կաթոլիկ հասարակութիւնը վերջերս տրամադրութիւն ցոյց տուաւ ազգ. ժողով գումարելով պատրիարքական տեղապահի ընտրութիւն կատարել։

Թերզեան պաշտօնանկ պատրիարքը, սակայն, որքան ատեն որ կը պահէ կաթողիկոսական հանգամանքը, պատուհաս մը ըլլալէ չէ դադրած, և կը վախցուի որ տեղապահի ընտրութենէն յետոյ իր կրօնական հեղինակութեամբ դարձեալ աղէտալի դերեր կատարէ այդ հասարակութեան մէջ։

Տեղապահի ընտրութեան համար արդէն դժուարութիւններ կը հանէ այժմէն։

Ընդամենը վեց եպիսկոպոսներ կան, որոնք կառավարութենէն ճանչցուած են իբրենց այդ հանգամանքով, ուստի անոնց վրայ է որ պիտի կատարուի ընտրութիւնը։

Անոնցմէ զատ կան նաև 12 հատ ուրիշ եպիսկոպոսներ, որոնք Թերզեան առանց ժողովրդային ընտրութեան ձեռնադրած ըլլալուն համար կառավարութեան կողմէ չեն ճանչցուած։

Կառավարութիւնը պայման դրած է հիմա, որ տեղապահը առնուի իր ճանչցած եպիսկոպոսներէն, որոնք, ինչպէս ըսինք, թիւով վեց են։ Ընտրութեան համար ալ հրամայած է, որ գումարուի հասարակութեան ներկայացուցիչներէն ժողով մը, որ խառն նիստ ընելով կրօն. և քաղ. ժողովներու հետ՝ ընտրէ տեղապահը։

Այս նպատակով ազգ. ժողովի նոր ընտրութիւն մը եղաւ։ Ընտրութիւնները աւարտած են և ժողովին անդամ ընտրուած են նաև եկեղեցականներ, որոնք հիմա Թերզեանէն արգիլուած են ժողովին ներկայ գտնուելու՝ կարգազուրկ ըլլալու սպառնալիքով։ Կրօն. ժողովը, որուն ներկայութիւնը կարևոր է, կը գտնուի նոյն արգելքին տակ և իր մասնակցութիւնը բերելու համար պայման կը դնէ, որ ազգ. ժողովը բաւականանայ միայն հինգանուն ցանկ մը կազմելով և վերջնական ընտրութիւնը իրեն թողու։

Ասկէ բացորոշ կերևայ, թէ Թերզեան կղերական գերիշխանութիւն մը և բացարձակ տիրապետութիւն մը ապահովելու իղձէն չէ հրաժարած։

Շառայլ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեք. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն Ե Ր Ը
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—112

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ

Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը սահմանվում է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ռ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ [illegible] կամ [illegible] և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—45

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մագդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . 40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.
(4) 0—6

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
վաճառվում են հետևեալ գրական արտադրութիւնները.

ԱՐԱՆՁԱՐ. «Վշտի ծիծաղը», գ. 1 ր.
Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ. «Էսքիզներ», գ. 50 կ.
Տ. ԵԺ. Թարգմ. Մ. Բարխուդարեանի «Լուսաղէմին», գ. 1 ր.
ԼԻՆՉ. Թարգմ. Լեօն Լարենց «Հայաստան», ուղևորութիւններ և ուսումնասիրութիւններ Ա. հատոր գ. 2 ր. 50 կ.
Պ. ՊՌՕՇԵԱՆ. «Հացի խնդիր», գ. 1 ր. 50 կ.
Ե. ՍՕԼՕՎԵԱՆ. «Սատանից օ-գին», վէպ. գ. 40 կ.
ՐԱՖՖԻ. «Սալբի», ազգային վիպասանութիւն պարսկահայոց կեանքից, հատոր առաջին գ. 3 ր.
ՐԱՖՖԻ. «Սամուէլ», պատմական վէպ. (364—400) գ. 3 ր. 50 կ.
ՖՐԱՆԳԵԱՆ. «Պեսսիմիզմի փիլիսոփան», գ. 50 կ.
КИШМИШЕВЪ. «Война въ Турецкой Арменіи» 1877—78. г. ц. 5 р.

Այդ նոյն գրավաճառանոցում կարելի է ստանալ թէ պետական և թէ միւս դպրոցներում գործածվող համարեա բոլոր դասագրքերը հայերէն լեզուով. բացի այդ՝ ներկայ պատերազմի քարտէզներ ամենայն մանրամասնութեամբ։
Դիմել՝ Въ Тифлисъ, Центральная книжная торговля. 1004. 1—1

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԴԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ռեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպերով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, ռեցեպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը, Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿԶՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկզորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Նիկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վօդէվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «[illegible]», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, գիւղերի նկարներով, գինն է 7.։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(հ.կ.) 327. 100—50

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ս. ՔԱՀ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
„Армяно-Григоріанскій
Календарь“
на 1915 г.

Գինն է 25 կ.։ Դիմել՝ Ставрополь г., Свящ. С. Теръ-Ованнесьяну.
(օ.մ.) 1002. 10—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, նոյեմբերի 16-ին, առաւօտեան ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Կաթողիկէ ս. Աստուածածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցում նշանակված է ԵՐԿՐՈՐԴ և ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎ՝ ընտրելու երկու պատգամաւոր և երկու անձնափոխանորդ, որոնք մասնակցելու են Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան, որովհետև հոգևոր իշխանութեան կողմից բեկանված է Կաթողիկէ եկեղեցու յունիս ամսվայ ընտրութիւնը։

Ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծապատիւ ձայնատու ծխականներին շնորհ բերել նշանակված ժամին եկեղեցի՝ մասնակցելու այդ ընտրութեանը։

Առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվի։

Աւագ-երէց Կաթողիկէ եկեղեցու՝
Ստեփաննոս ա.-ք. Սամուէլեանց
(հ. կ.) 992. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Մ. ՋՄՇԿԵԱՆԻ
1915 թ.
„ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ“
ՍԱՍՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՊԵՏ
Անդրանիկի
պատկերով։

Ցանկացողները թող շտապեն, որպէսզի հերթին՝ ժամանակին կարողանան ստանալ։
Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Ջմշկեան։
(հ.կ.) 966. 10—6

Գիւղատնտեսական Բիւրօ
Գիւղատնտեսութեանը եւ կօօպերացիային վերաբերող խորհուրդներով իրան դիմողներին
ԳԻՒՂԱՏՆՏԵՍ
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) առաւօտ. ժ. 8½-ից մինչև 10½-ը, երեկ. ժ. 5½-ից մինչև 7½-ը։ Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատասխանի համար պէտք է ուղարկել 2 հատ 7 կոպէկանոց փօստային մարկաներ։
Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.
(հ. հ. կ.) 921. 0—17

ՇԱՐԺԻՉՆԵՐ
ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис Метал. Заводъ
Ինժեներ Գ. Ջ. ԵԱՐԱԼԵԱՆ և ԸՆԿ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, № 9, սեփ. տուն
Տելեֆօն № 9 Կառավարչի բնակարան 14—78.

Գործարանը պատրաստում է եւ կառուցանում տրանսմիսիաներ, ֆրիկցիօն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիներ, շարժիչ-թեւեր, ատամնաւոր անիւներ, ռեգուլյատորներ, փօրձեր եւ այլն։
(կ.) 983. 25—1
ՁՈՒԼԱՐԱՆ

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
Ի Ն Ժ Ե Ն Ե Ր
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվոդսկայա փ. տ. Աւան-Իսրաելեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբիններ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջնորդներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
551. 0—48
(հ.կ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величество на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный